ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N- ԱՀ-03/280/23
06.11.2023 թ.

«Սադոյան» ՍՊԸ-ի
տնօրեն Արտեմ Սադոյանին

Հարգելի պարոն Սադոյան,

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ և «Սադոյան» ՍՊԸ-ի միջև 28.10.22թ.-ին կնքվել է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46-2 ծածկագրով գնման պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/, որով ապրանքների մատակարարման ժամկետը սահմանվել է պայմանագիրը ստորագրելուց հետո 100 օրվա ընթացքում: 01.02.22թ.-ին կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի ժամկետը երակարացվել է ևս 30 օրացուցային օրով:

Սակայն վերոնշյալ պայմանագրով սահմանված ժամկետում Ձեր ընկերության կողմից պայմանագրային պարտավորությունները չեն կատարվել: Հաշվի առնելով «Սադոյան» ՍՊԸ-ի պայմանագրային պարտավորությունների չկատարումը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.11 կետը՝ Ընկերությունը մասնակի միակողմանի լուծում է ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46-2 գնման պայմանագիրը: Տեղեկացնում ենք, որ ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/46-2 ծածկագրով գնման պայմանագիրը համարվում է միակողմանի լուծված և պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագրի միակողմանի լուծման մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Գործադիր տնօրենի տեղակալ-
ֆինանսական տնօրեն **Արարատ Հակոբյան**

Կատարող՝
Գոհար Կարապետյան
Գնումների կազմակերպման բաժնի պետ
Հեռ՝. +374-010 -65 00 15/(1-70)

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ support@armtv.com